Հաստատված է ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ
«_31_ »__08__ 2022 թ.-ի նիստում (արձ. թիվ 1):
Ամբիոնի պետ, ոստ. գնդապետ
Ա. Հովհաննիսյան ……
(ստորագրություն)

……
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		ՀՀ քրեական դատավարության իրավունք – 1 (հեռակա ուսուցում)
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Քրեական դատավարության ամբիոն E-mail: qrdatambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ա. Հովհաննիսյան (ի.գ.թ., դոցենտ) E-mail: qrdatambion@mail.ru Հեռ.՝ +374 93000762
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		3-րդ կուրսի 2-րդ կիսամյակ / 4-րդ կուրսի 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**5 (հինգ)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«ՀՀ քրեական դատավարության իրավունք – 2» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 150 ժամ, որից 18-ը՝ դասախոսություն, 2-ը՝ սեմինար, 2-ը՝ գործնական, 128-ը՝ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացը գնահատվում է քննության անցկացմամբ՝ 4-րդ կուրսի 1-ին (7-րդ) կիսամյակում, ինչպես նաև կուրսային աշխատանքի պատրաստմամբ և պաշտպանությամբ:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն», «ՀՀ սահմանադրական իրավունք», «ՀՀ քրեական իրավունք» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«ՀՀ քրեական դատավարության իրավունք – 1» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են՝ քրեական դատավարության որպես իրավապահ գործունեության տեսակի և իրավունքի ճյուղի էությունը և նշանակությունը, քրեական դատավարության հիմնարար դրույթներն ու կատեգորիաները, մինչդատական վարույթի ընդհանուր դրույթները, ապացուցողական գործողությունների օրինաչափությունները, դատական վարույթների ընդհանուր պայմանները:
ՆՊԱՏԱԿ/ԽՆԴԻՐՆԵՐ		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ քրեական դատավարության ընդհանուր մասի, մինչդատական վարույթի ընթացքի, օրինաչափությունների, դատական վարույթների ընդհանուր պայմանների մասին և ձևավորել այդ ընթացքում ծագող հարաբերությունները կարգավորող նորմերի մեկնաբանման, վարութային փաստաթղթերի կազմման կարողություններ: Դասընթացի խնդիրներն են՝ 1. ներկայացնել ու սահմանել քրեական դատավարության՝ որպես իրավապահ գործունեության էությունը, քրեադատավարական հիմնական հասկացությունները. 2. ներկայացնել ՀՀ քրեական դատավարության իրավունքի էությունը և բովանդակությունը. 3. ներկայացնել ՀՀ քրեական դատավարության սկզբունքներն ու խնդիրները. 4. բացատրել քրեական դատավարության սուբյեկտների իրավական վիճակը. 5. ներկայացնել քրեադատավարական ապացույցներն ու ապացուցումը. 6. ներկայացնել քրեադատավարական հարկադրանքի միջոցների ընտրության և կիրառման դատավարական կարգը. 7. ներկայացնել քրեական վարույթ նախաձեռնելու կարգը. 8. ներկայացնել մինչդատական վարույթի ընդհանուր պայմանները. 9. բացատրել քրեական հետապնդում հարուցելու և մեղադրանք ներկայացնելու, քրեական հետապնդման ժամկետների կասեցման, քրեական հետապնդման դադարեցման, քրեական վարույթը կարճելու նշանակությունը և դատավարական կարգը. 10. սահմանել ապացուցողական գործողությունների հասկացությունը, բացատրել դրանց կոնկրետ տեսակների իրականացման դատավարական կարգը.

		11. ներկայացնել դատական վարույթի ընդհանուր պայմանները. 12. բացատրել մինչդատական վարույթի դատական երաշխիքների վարույթները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ **1. *Կարողանա՝***		1. բացատրել քրեական դատավարության սոցիալական նշանակությունը և ՀՀ քրեադատավարական իրավունքի առանձնահատկությունները, 2. ներկայացնել ու վերլուծել քրեական դատավարության սուբյեկտների իրավական կարգավիճակը, 3. կատարել քրեական դատավարության սկզբունքների պահանջները, 4. կատարել ապացույցների հավաքման, ստուգման ու գնահատման կարգը սահմանող նորմերի պահանջները, 5. կատարել քրեադատավարական հարկադրանքի միջոցների ընտրության և կիրառման կարգը սահմանող նորմերը, 6. կատարել քրեական վարույթ նախաձեռնելու կարգը սահմանող նորմերը 7. նկարագրել մինչդատական վարույթի ընդհանուր պայմանները. 8. նկարագրել քրեական հետապնդում հարուցելու և մեղադրանք ներկայացնելու, քրեական հետապնդման ժամկետների կասեցման, քրեական հետապնդման դադարեցման, քրեական վարույթը կարճելու նշանակությունը և դատավարական կարգը. 9. օրենքով սահմանված կարգին համապատասխան կայացնել որոշում հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին և արձանագրություն՝ անձին մեղադրանք ներկայացնելու մասին. 10. սահմանել ապացուցողական գործողությունների հասկացությունը, բացատրել ապացուցողական գործողության նշանակությունը ապացուցման գործում, օրենքով սահմանված կարգին համապատասխան կայացնել որոշում քննչական գործողության կատարման մասին, կազմել քննչական գործողության և գաղտնի քննչական գործողության արձանագրություն. 11. նկարագրել դատական վարույթի ընդհանուր պայմանները 12. բացատրել մինչդատական վարույթի դատական երաշխիքների բովանդակային տարրերը, դատարանում

		միջնորդությունների քննարկման ու որոշումների կայացման կարգը:
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ **Հիմնական**		1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2/ Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան. – Եր., Տիգրան Մեծ, 2017: 2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս. Երևան, Երևանի համալս. հրատ., 2010: 3. Уголовный процесс: учебник / под ред.: Божьев В.П. – 4-е изд., перераб. и доп. – М.: Спарк, 2004. 4. Уголовно-процессуальное право Российской Федерации: учебник / отв. ред. П.А. Лупинская. – М., 2011. 5. Уголовный процесс. Общая и Особенная части: учебник для юридических вузов и факультетов / под ред.: В.В. Вандышева – М.: Контракт, 2014. 6. Уголовно-процессуальное право: учебник для бакалавриата и магистратуры / под общ. ред.: В.М. Лебедева. – 2-е изд., пер. и доп. – М.: Издательство Юрайт, 2017.
Լրացուցիչ		1. *Божьев, В.П.* Уголовно-процессуальные правоотношения: монография / В.П.Божьев. – М., 1975. 2. *Ефимичев, С.П.* Функции в уголовном судопроизводстве: понятие, сущность, значение / С.П. Ефимичев, П.С. Ефимичев // Журнал российского права. – 2005. – № 7. 3. *Смирнов, А.В.* Модели уголовного процесса: монография / А.В. Смирнов. – СПб.: Наука, 2014. 4. *Аветисян, А.Д.* Принципы уголовного судопроизводства: учебное пособие / А.Д. Аветисян – Ставрополь: СФ КрУ МВД России, – 2010. 5. *Мириев, Б.А.* Принцип законности в системе принципов уголовного процесса / Б.А. Мириев // Российский следователь – 2010. – № 22. 6. *Образцов, А.В.* От разумных сроков в уголовном процессе к принципу разумности / А.В. Образцов // Российский следователь. – 2011. – № 16. 7. *Азаров, В.А.* Функция судебного контроля в истории, теории и практике уголовного процесса России: монография / В.А. Азаров, И.Ю. Таричко. – Омск: Изд-во Омск. ун-та, 2004. 8. *Азаров, В.А.* Функция предварительного расследования в истории, теории и практике уголовного процесса России: монография / В.А. Азаров, Н.И. Ревенко, М.М. Кузембаева. – Омск: Изд-во Омск. ун-та, 2006. 9. *Крюков, В.Ф.* Уголовное преследование в досудебном производстве: уголовно-процессуальные и надзорные аспекты деятельности прокурора: монография / В.Ф. Крюков – М.: Норма, 2014. 10. *Черняков, М.М.* Процессуальный контроль в досудебном производстве: монография / М.М. Черняков. – Красноярск: УРАО, 2011. 11. *Васяев, А.А.* Признание доказательств недопустимыми в ходе судебного следствия в суде первой инстанции в российском уголовном процессе: монография / А.А. Васяев. – Волтерс Клувер, 2010. 12. *Коршунов, А.В.* Доказательства и доказывания в уголовном процессе: учебное пособие / А.В. Коршунов. – М., 2011.

		13. *Микаутадзе, С.Р.* Недопустимые доказательства в уголовном судопроизводстве России: учебное пособие / С.Р. Микаутадзе. – М., 2011. 14. *Барабаш, А.С.* Начало исчисления срока задержания по подозрению в совершении преступления / А.С. Барабаш // Законность. – 2011. – № 1. 15. *Воронов, Д.А.* Меры уголовно-процессуального принуждения как средства обеспечения безопасности участников уголовного процесса: монография / Д.А. Воронов. – Барнаул: Барнаульский юридический институт МВД России, 2010. 16. *Марфицин, П.Г.* Возбуждение уголовного дела в отношении лица, подозреваемого в совершении преступления: монография / П.Г. Марфицин. – Н. Новгород: Нижегородская академия МВД России, 2009. 17. *Черепанова, Л.В.* Возбуждение уголовного дела в вопросах и ответах: учебно-методическое пособие / Л.В. Черепанова. – М., 2012. 18. *Цапко, Ж.Б.* Возбуждение уголовного дела: учебное пособие / Ж.Б. Цапко. – М., 2011. 19. *Азаров, В.А.* Функция предварительного расследования в истории, теории и практике уголовного процесса России: монография / В.А. Азаров, Н.И. Ревенко, М.М. Кузембаева. – Омск: Изд-во ОмГУ, 2006. 20. *Есина, А.С.* Производство дознания органами внутренних дел: некоторые процессуальные и организационные аспекты / А.С. Есина // Электронный ресурс, подготовлено для СПС Консультант плюс, 2007. *21. Ефимичев, П.С.* Расследование преступлений: теория, практика, обеспечение прав личности : монография / П.С. Ефимичев, С.П. Ефимичев. – М.: Юстицинформ, 2012. *22. Малышева, О.А.* Предварительное расследование по УПК России (процессуальные и организационно-правовые аспекты): монография / О.А. Малышева. – М., 2004. 23. *Бравилова, Е.А.* Привлечение в качестве обвиняемого: учебное пособие / Е.А. Бравилова – М., 2009. *24. Дьяконова, О.Г.* Особый порядок принятия судебного решения при согласии обвиняемого с предъявленным обвинением: проблемы теории и практики / О.Г. Дьяконова // Российский судья. – 2010. – № 4. 25. *Ефремова, Н.П.* Привлечение в качестве обвиняемого: учеб. пособие: допущено МВД РФ / Н.П. Ефремова, В.В. Кальницкий. – Омск: ОА МВД РФ, 2012. 26. *Вдовцев, П.В.* Неотложные следственные действия в российском уголовном процессе: вопросы теории, практики и законодательной регламентации: монография / П.В. Вдовцев. – М., 2012. 27. *Гармаев, Ю.П.* Руководство для следователя и его общественного помощника: учебно-практическое пособие / Ю.П. Гармаев // СПС КонсультантПлюс. 28. *Мусеибов, А.Г.* Правила применения цифровой аппаратуры и компьютерной техники при производстве следственных действий /

		А.Г. Мусеибов // СПС КонсультантПлюс.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Բաղադրիչ 1 – 100 % (քննություն) Բաղադրիչ 2 – 100 % (կուրսային աշխատանքի պաշտպանություն)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	

Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով
18-20	Գերազանց
13-17	Լավ
8-12	Բավարար
0-7	Անբավարար
0	Չներկայացած

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:

Ներկայություն		Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

3-րդ կուրսի 2-րդ կիսամյակ

Թեմա 1 Քրեական դատավարության ընդհանուր դրույթները **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Քրեական դատավարության հասկացությունը, էությունը և նպատակը 2) Քրեական վարույթի իրականացման հիմունքները 3) Հիմնական քրեադատավարական հասկացություններ (քրեադատավարական ֆունկցիաներ, դատավարական ձև, դատավարական երաշխիքներ) 4) Քրեադատավարական իրավունքի հասկացությունը, նշանակությունը և աղբյուրները 5) Քրեադատավարական օրենքի գործողությունը տարածության վրա, ժամանակի մեջ և ըստ անձանց շրջանակի	Հարցեր 1-5՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 4-5՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 2 Քրեական վարույթի սկզբունքները **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Քրեական վարույթի սկզբունքների հասկացությունը և նշանակությունը 2) Վարույթի հանրայնությունը 3) Բոլորի հավասարությունն օրենքի առջև 4) Անմեղության կանխավարկածը 5) Անձի ազատությունը և անձնական անձեռնմխելիությունը 6) Իրավաբանական օգնության ապահովումը 7) Մեղադրյալի պաշտպանության ապահովումը 8) Կողմերի հավասարությունը և մրցակցությունը 9) Պատշաճ ապացուցումը 10) Դատական պաշտպանության ապահովումը 11) Վարույթի ողջամիտ ժամկետը	Հարցեր 1-16՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 5-7, 10, 11, 14, 15՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

12) Կրկին դատվելու անթույլատրելիությունը 13) Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությունը 14) Վարույթի լեզուն 15) Դատական վարույթի հրապարակայնությունը 16) Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը	

Թեմա 3 Քրեական դատավարության սուբյեկտները **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Քրեական դատավարության սուբյեկտների հասկացությունը և դասակարգումը 2) Դատարանը 3) Վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունը, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները 4) Դատախազը 5) Քննիչը: Քննչական մարմնի ղեկավարը 6) Հետաքննության մարմինը 7) Տուժողը 8) Մեղադրյալը 9) Պաշտպանը 10) Գույքային պատասխանողը 11) Վկան 12) Փորձագետը 13) Թարգմանիչը 14) Ընթերական և դատական նիստի քարտուղարը 15) Ներկայացուցչությունը քրեական վարույթում 16) Վարույթին մասնակցության անհնարինությունը	Հարցեր 1-16՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 3, 15, 16՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 4 Ապացույցները և ապացուցումը քրեական դատավարությունում **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Ապացույցների հասկացությունը, տեսակները և դասակարգումը 2) Ապացուցումը 3) Ապացուցման տարրերը 4) Ապացուցման առարկան և սահմանները 5) Ցուցմունքները 6) Փորձագետի եզրակացությունը և կարծիքը 7) Իրեղեն ապացույցները 8) Ապացուցողական և վարութային այլ գործողությունների արձանագրությունները 9) Արտավարութային փաստաթղթերը	**1.** Հարցեր 1-9՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: **2.** Հարցեր 5-9՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 5 Քրեադատավարական հարկադրանքի միջոցները **(4 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Քրեադատավարական հարկադրանքի միջոցների հասկացությունը և դասակարգումը 2) Ձերբակալումը 3) Խափանման միջոցների հասկացությունը, կիրառման, փոխման կամ վերացման իրավաչափությունը 4) Կալանքը 5) Այլընտրանքային խափանման միջոցները 6) Գույքի արգելադրումը 7) Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները 8) Դատավարական սանկցիաները	**1.** Հարցեր 1-8՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: **2.** Հարցեր 2, 4, 7, 8՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 6 Քրեական վարույթ նախաձեռնելը **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական վարույթ նախաձեռնելու աղբյուրները, առիթները և հիմքը 2. Քրեական վարույթի նախաձեռնման կարգը	Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարց 1՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

<u>4-րդ կուրսի 1-ին կիսամյակ</u>

Թեմա 7 Մինչդատական վարույթը և ապացուցողական գործողությունները **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Մինչդատական վարույթի ընդհանուր պայմանները 2) Հանրային քրեական հետապնդումը 3) Հանրային քրեական հետապնդման կասեցումը, քրեական հետապնդումը դադարեցնելը և քրեական վարույթը կարճելը 4) Նախաքննության ավարտը մեղադրական եզրակացություն կազմելով 5) Ապացուցողական գործողությունները	Հարցեր 1-5՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարց 5՝ գործնական աշխատանքի կատարում, այն է՝ ապացուցողական գործողությունների արդյունքներն արտացոլող արձանագրությունների կազմում Հարցեր 3 և 4՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 8 Դատական վարույթների ընդհանուր պայմանները և մինչդատական վարույթի դատական երաշխիքները **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Դատական վարույթների ընդհանուր պայմանները 2) Մինչդատական վարույթի դատական երաշխիքները	Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-2՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: Հարցեր 1-2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

ՀԱՐՑԱՇԱՐ
«ՀՀ քրեական դատավարության իրավունք - 1» առարկայի քննության

1. Քրեական դատավարության հասկացությունը, էությունը և նպատակը
2. Քրեական վարույթի իրականացման հիմունքները
3. Քրեադատավարական ֆունկցիաները, ձևը և դատավարական երաշխիքները
4. Քրեադատավարական իրավունքի հասկացությունը, նշանակությունը և աղբյուրները
5. Քրեադատավարական օրենքի գործողությունը տարածության վրա, ժամանակի մեջ և ըստ անձանց շրջանակի
6. Վարույթի հանրայնությունը
7. Բոլորի հավասարությունն օրենքի առջև
8. Անմեղության կանխավարկածը
9. Անձի ազատությունը և անձնական անձեռնմխելիությունը
10. Իրավաբանական օգնության ապահովումը
11. Մեղադրյալի պաշտպանության ապահովումը
12. Կողմերի հավասարությունը և մրցակցությունը
13. Պատշաճ ապացուցումը
14. Դատական պաշտպանության ապահովումը
15. Վարույթի ողջամիտ ժամկետը
16. Կրկին դատվելու անթույլատրելիությունը
17. Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությունը
18. Վարույթի լեզուն
19. Դատական վարույթի հրապարակայնությունը
20. Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը
21. Քրեական դատավարության սուբյեկտների հասկացությունը և դասակարգումը
22. Դատարանի կազմը և իրավասությունը
23. Վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունը, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները
24. Հսկող դատախազը և նրա լիազորությունները մինչդատական վարույթում
25. Վերադաս դատախազը և նրա լիազորությունները մինչդատական վարույթում
26. Դատախազի լիազորությունները դատական վարույթի ընթացքում
27. Քննիչը
28. Քննչական մարմնի ղեկավարը
29. Հետաքննության մարմինը
30. Տուժողը: Մահացած տուժողի կամ տուժող ճանաչվելու ենթակա անձի փոխարեն տուժող ճանաչելը
31. Տուժողը՝ որպես մասնավոր մեղադրող
32. Մեղադրյալը
33. Քրեական վարույթին պաշտպանի մասնակցության հիմքերը և պայմանները
34. Պաշտպանի պարտադիր մասնակցությունը: Պաշտպանից հրաժարվելը
35. Գույքային պատասխանողը
36. Վկան
37. Փորձագետը
38. Թարգմանիչը

39. Ընթերական և դատական նիստի քարտուղարը
40. Օրինական ներկայացուցիչները քրեական վարույթում
41. Լիազոր ներկայացուցիչները քրեական վարույթում
42. Ինքնաբացարկի, բացարկի կամ վարույթին մասնակցելուց ազատելու հարցի լուծումը
43. Վարույթին դատավորի մասնակցությունը բացառող հանգամանքները
44. Վարույթին հանրային մասնակիցների և փաստաբանի մասնակցությունը բացառող հանգամանքները
45. Վարույթին օրինական ներկայացուցչի մասնակցությունը բացառող հանգամանքները
46. Փորձագետին, թարգմանչին, ընթերակային կամ դատական նիստի քարտուղարին բացարկելը
47. Վարույթին մասնակցելուց ազատելը հարգելի պատճառի առկայության դեպքում
48. Ապացույցների հասկացությունը, տեսակները և դասակարգումը
49. Ապացուցման հասկացությունը, նպատակը և հիմքը: Զգայական և ռացիոնալ ճանաչողությունը
50. Ապացուցման սուբյեկտը
51. Ապացույցների հավաքումը, ստուգումը և գնահատումը
52. Ապացուցման առարկան և սահմանները
53. Ցուցմունքը
54. Փորձագետի եզրակացությունը և կարծիքը
55. Իրեղեն ապացույցները
56. Ապացուցողական և վարութային այլ գործողությունների արձանագրությունները
57. Արտավարութային փաստաթղթերը
58. Ձերբակալումը
59. Խափանման միջոցների հասկացությունը, կիրառման, փոխման կամ վերացման իրավաչափությունը
60. Կալանքը
61. Տնային կալանքը
62. Վարչական հսկողությունը
63. Գրավը
64. Պաշտոնավարման կասեցումը
65. Բացակայելու արգելքը
66. Երաշխավորությունը
67. Դաստիարակչական հսկողությունը
68. Զինվորական հսկողությունը
69. Գույքի արգելադրումը
70. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները
71. Դատավարական սանկցիաները
72. Քրեական վարույթի նախաձեռնման առիթները, հիմքը և կարգը
73. Նախաքննության մարմինները և քննչական ենթակայությունը
74. Նախաքննության կատարման վայրը

75. Նախաքննության կատարումը քննչական խմբի կողմից: Քննչական խմբի ղեկավարի լիազորությունները
76. Հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելը
77. Նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը
78. Հետաքննություն կատարելու հիմքը, սկիզբն ու ավարտը
79. Հանրային քրեական հետապնդում հարուցելու դատավարական կարգը
80. Մեղադրանք ներկայացնելը, փոփոխելը կամ լրացնելը
81. Հանրային քրեական հետապնդումը և դրա ժամկետները
82. Հանրային քրեական հետապնդման ժամկետի կասեցումը և վերսկսումը
83. Հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու (չհարուցելու) հիմքերը և կարգը
84. Չհարուցված կամ դադարեցված քրեական հետապնդումը նորոգելը
85. Քրեական վարույթի կարճումը
86. Մեղադրական եզրակացության նշանակությունը և կառուցվածքը
87. Մեղադրական եզրակացություն կազմելով նախաքննության ավարտի դատավարական կարգը
88. Դատախազական հսկողությունը մեղադրական եզրակացություն կազմելով նախաքննության ավարտի նկատմամբ
89. Ապացուցողական գործողությունների հասկացությունը, նշանակությունը և դասակարգումը
90. Քննչական գործողությունների կատարման ընդհանուր պայմանները
91. Քննչական գործողությունների տեսակները և կատարման դատավարական կարգը
92. Փորձաքննությունը
93. Գաղտնի քննչական գործողությունների նշանակությունը, կատարման և արդյունքների ամրագրման կարգը, տեսակները
94. Գաղտնի քննչական գործողությունների կատարման ընդհանուր պայմանները
95. Ընդդատությունը
96. Դատական վարույթի ընթացակարգային պայմանները
97. Դատական նիստի ընթացակարգային պայմանները
98. Մասնակցությունը դատական վարույթին
99. Մինչդատական վարույթի դատական երաշխիքների էությունը և նշանակությունը
100. Խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքները
101. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառման դատական երաշխիքները
102. Ապացուցողական գործողությունների կատարման դատական երաշխիքները
103. Սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքները
104. Հանրային մասնակիցների վարութային ակտերի իրավաչափության դատական երաշխիքները
105. Ցուցմունքի դեպոնացման դատական երաշխիքները

Ց Ա Ն Կ

«ՀՀ քրեական դատավարության իրավունք - 1» առարկայից կուրսային աշխատանքից հանձնարարվող թեմաների

1. Ցուցմունքի դատական դեպոնացումը
2. Հատուկ վերանայումը
3. Խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքները
4. Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությունը
5. Հանրային մասնակիցների վարութային ակտերի (մինչդատական ակտերի) իրավաչափության դատական երաշխիքները
6. Նոր հանգամանքներով բացառիկ վերանայման վարույթը
7. Փորձաքննությունը
8. Դատավարական սանկցիաները
9. Համագործակցության վարույթը
10. Համաձայնեցման վարույթը
11. Անձի ազատությունը և անձնական անձեռնմխելիությունը
12. Անմեղության կանխավարկածը
13. Մեղադրյալի պաշտպանության ապահովումը
14. Դատական վարույթի հրապարակայնությունը
15. Կողմերի հավասարությունը և մրցակցությունը
16. Պատշաճ ապացուցումը
17. Դատախազը
18. Հանրային քրեական հետապնդումը հարուցելը
19. Արտաշիրմումը և քննումը
20. Տուժողը
21. Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը
22. Վարույթի հանրայնությունը
23. Մեղադրյալը
24. Տեղեկատվության պահանջը և առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելը
25. Պաշտպանը: Պաշտպանի պարտադիր մասնակցությունը
26. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթը
27. Բժշկական հարկադրանքի վարույթը
28. Դատաքննությունը
29. Ցուցմունքը տեղում ստուգելը
30. Ապացուցողական գործողությունների կատարման դատական երաշխիքները
31. Փորձագետը
32. Վկան
33. Վարույթին մասնակցության անհնարինությունը
34. Ապացույցների հասկացությունը: Ապացույցների օգտագործման սահմանափակումները
35. Ապացուցման առարկան և սահմանները
36. Ապացույցների հավաքումը և ստուգումը
37. Վկայի և տուժողի ցուցմունքները
38. Փորձարարությունը

39. Ապացույցների գնահատումը: Փաստերի իրավական կանխավարկածը
40. Վերաքննությունը
41. Քրեական հետապնդման հարուցումը
42. Քննիչը
43. Նախաքննության ավարտը
44. Վճռաբեկությունը
45. Պաշտոնավարման կասեցումը
46. Դատական վարույթների ընդհանուր պայմանները
47. Մեղադրյալի և ձերբակալվածի ցուցմունքները
48. Փորձագետի եզրակացությունը և կարծիքը
49. Իրեղեն ապացույցները
50. Ապացուցողական և վարութային այլ գործողությունների արձանագրությունները
51. Արտավարութային փաստաթղթերը
52. Ձերբակալումը
53. Կալանքը
54. Բացակայելու արգելքը
55. Երաշխավորությունը
56. Դաստիարակչական հսկողությունը
57. Զինվորական հսկողությունը
58. Նոր ի հայտ եկած հանգամանքներով բացառիկ վերանայման վարույթը
59. Հետաքննությունը
60. Քրեական վարույթի նախաձեռնումը
61. Քրեական հետապնդումը դադարեցնելը
62. Հիմնարար խախտման հիմքով բացառիկ վերանայման վարույթը
63. Ճանաչումը
64. Տնային կալանքը
65. Վարչական հսկողությունը
66. Քրեական հետապնդման ժամկետների կասեցումը